Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

17

ԹԱՄՐԱԳՈՐԾԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Բերդաքաղաքի մասին ես շատ էի լսել: Այդ անունը առնչված էր քաջ Արաբոյի անվան հետ, որ քար էր ջարդել այդ քաղաքի մայր խճուղին շինելու համար:

Բերդաքաղաքը շինված էր սարահարթի վրա, շրջապատված բնական ամրություններով: Քաղաքին իշխողը հսկայական բերդն էր: Բերդաքաղաքից եկողները Մուշում պատմում էին, որ այդ բերդի գլխին սատանաները խոշոր կարասների մեջ գիշեր ու ցերեկ կուպր են եփում:

Տները սև քարից էին, թիթեղյա կարմիր ու կանաչ տանիքներով: Մեջտեղով անցնում էր Սինամ գետը: Կամուրջներից հայտնի էին երկուսը՝ Քարե կամուրջը և Չուգունե կամուրջը: Վերջինս տանում էր դեպի Սարիղամիշ:

Մենք անցանք Քարե կամուրջը և շարժվեցինք դեպի Լոռիս Մելիքովի փողոցը: Այդտեղ, բերդ տանող ճանապարհի վրա, կանգնած էր մի ռուս զինվորի բրոնզյա արձան: Երկգլուխանի արծիվը զայրացած ծվատում էր զինվորի ոտքի տակ տարածված կանաչ պաստառը կարմիր մահիկով:

Բրոնզյա այդ հուշարձանի մոտ մեզ դիմավորեց Լոռեցի Սրապ անունով մի տղամարդ՝ Գեորգիևյան խաչը կրծքին: Սրապը Լոռվա Վարդաբլուր գյուղից էր: 1877-ին մասնակցել էր Ալաշյայի բարձունքներում մղվող պատերազմին և Լոռիս

Մելիքովի հաղթական զորքի հետ մտել Բերդաքաղաք: Սևահոն, բաց կապույտ աչքերով մի զինվորական էր: Կռվից հետո հաստատվել էր Բերդաքաղաքում և զբաղված էր հայդուկային խմբերին զենք մատակարարելու գործով:

Տասնութ տարեկան էի, երբ Լոռիս Մելիքովի առջևից Մուխթար փաշան փախավ: Մեր թնդանոթների որոտը մինչև Լոռվա սարերն էր հասնում, ասաց Լոռեցի Սրապը և մեզ քաղաքային այգու միջով առաջնորդեց դեպի մի փոքրիկ արհեստանոց: Արհեստանոցի ցուցանակին նկարված էր փայտյա մի թամբ և ձիու գլուխ. թամբը՝ կարմիր գույնի, ձիու գլուխը՝ սև:

Այդտեղ նա մեզ ներկայացրեց երկու օտարական հայերի:

Երկրեն կուգան, ասաց Լոռեցի Սրապը շշուկով և ինքը արագ դուրս եկավ:

Հայերից մեկը Էրզրումցի էր, իսկ մյուսը՝ իգդիրցի: Էրզրումցու անունը Արշակ էր, բայց Քեռի էին ասում: Քեռին արհեստավորի գոգնոցը կապած, զբաղված էր մի հին թամբի նորոգությամբ: Միջահասակից քիչ բարձր էր, շալվարը սապոգների մեջ դրած, փոքր ինչ ալեխառն բեղով և աչքերը խաժ: Լռակյաց էր, գլուխը կախ: Քթի տակ ինչ-որ բան էր մտմտում: Գործասեղանին, որի վրա նա կռացած աշխատում էր, անկարգորեն թափված էին փայտե և երկաթե ասպանդակներ, տապճակներ, գամեր, պայտեր, իսկ մեջքի ետևը՝ պատից կախված էին երասանակներ, սանձեր, համետներ ամեն տեսակի ու չափսի, և ձիու ու ավանակի երեք խրտվիլակ:

Իգդիրցու անունը Դրո էր: Միջահասակ, թխադեմ, փոքրիկ բեղ ու մորուսով մի երիտասարդ էր Դրոն: Սա անկյունում քաշված ծխում էր և տաքացած վիճում ֆրենչ հագած ալեքսանդրոպոլցի մի պատանի սպայի հետ, որի փայլուն սև մազերը ալիքներով դուրս էին ցցված սպայական գլխարկի տակից: Որքան կարողացա հասկանալ, վեճը գընում էր արևմտյան և արևելյան Հայաստանի ազատագրության շուրջը: Մեկ–երկու անգամ ականջիս հնչեցին «Անդրանիկ» և «Գևորգ Չաուշ» անունները:

Ալեքսանդրոպոլցին չէր առարկում նրան: Իշխողը Դրոն էր, ռուս բանակի ավագ սպան:

Արշակը լուռ էր, ամբողջապես կլանված իր գործով: Նա գրեթե չէր լսում, թե ինչ է խոսում իգդիրցին: Երբեմն–երբեմն մի խաղաղ ժպիտ էր ցոլանում նրա ծաղկատար դեմքին: Հիշեցնում էր մեկին, որի նժույգը անհանգիստ դոփում է պատշգամբի տակ, և ինքը շտապում է թամբն ու ասպանդակները կարգի բերել, որ իսկույն ճանապարհ ընկնի: Ու՞ր: Գուցե դեպի Կարին, կամ դեպի Սասուն:

Քանի որ դու համամիտ ես ինձ գաղափարական տեսակետից, եկ խմենք ուրեմն ապագա ազատագրության կենացը, առաջարկեց Դրոն, դիմելով ֆրենչ հագած երիտասարդ սպային: Թող Արշակն էլ այդ կենացին մասնակից դառնա:

Ապագա աշխատավորական Հայաստանը կոփվում է Սասնո լեռներում, ուստի ես առաջարկում եմ խմել նախ և առաջ Գևորգ Չաուշի և նրա ֆիդայիների կենացը, որոնցից երկուսը այստեղ են, միջամտեց Արշակը և ձիու թամբը մի կողմ դնելով, մեզ իր հետ առած առաջացավ դեպի խորքում նստածները:

Խմենք, գոչեց ռուս բանակի սպան՝ երիտասարդ ալեքսանդրոպոլցու հետ ոտքի կանգնելով:

Գավաթները լցվեցին:

Անդրանիկի և Գևորգ Չաուշի կենացը, թնդաց իգդիրցին գավաթը բարձրացնելով: Խմենք այդ երկու տաքգլուխ՛ների և իրենց հայդուկների կենացը:

Մեծագույն տաքգլուխը դու ես, նկատեց Արշակը: Հայդուկների կենացը խմելուց առաջ սովորիր նախ հայդու՛կի պատիվը պահել:

Իսկ ես հայդուկ չեմ, ի՞նչ եմ: Եվ ո՞վ է վերջապես այդ շապինգարահիսարցին, տաքացավ Դրոն: Գևորգ Չաուշի և մի քանի սասունցի իշխանների օգնությամբ անտառում սպա՛նել է մի ցեղապետի և կարծում է, թե հայրենիքն արդեն փրկված է: Իսկ ես մենակս քսան տարեկան հասակում վրիժառու ձեռքիս մի հարվածով դժոխք ուղարկեցի ցարական նահանգապետին: Պայթյու՛ն: Եվ իշխանական կառքը Նագաշիձեի հետ երկինք բարձրացավ օրը ցերեկով: Եվ այն էլ ոչ թե մի խուլ անտառի մեջ, այլ մարդաշատ քաղաքի կենտրոնում: Այժմ ասացեք, ո՞վ է ավելի մեծ հայդուկ ե՞ս, թե Գևորգ Չաուշը կամ Անդրանիկը…

Թեպետ արդյունքը գովելի է, բայց ազատագրական պայքարի այդ ճանապարհը երբեք քաջալերիչ չէ, նկատեց երիտասարդ ալեքսանդրոպոլցին:

Անդրանիկը նույնպես այդ ճանապարհին է կանգնած:

Բայց նրա Վանքի կռիվը կազմակերպված պայքար էր, հիշեցրեց Քեռին: Երեսուն հայդուկներ կռվել են երեք հազար զորքի դեմ, և նրանց ձեռքին եղել է ընդամենը երե՛սունյոթ բերդանկի:

Այդ հարցը նորից գրգռեց իգդիրցուն, և նա սկսեց երիտասարդ սպայի հետ ռուսերեն խոսել: Քեռին դժգոհ մնաց այդ խոսակցությունից և, գավաթն իջեցնելով սեղանին, ըշտապեց զբաղվել իր թամբով:

Այն առաքելությունը, հանուն ինչի մենք Բերդակի անտառից տաժանելի ճամփորդությամբ հասել էինք Բերդաքաղաք և ինչի համար ինքս պատասխանատու էի, ստիպում էր ինձ կշռադատ լինել, իսկ Մշեցի Տիգրանը, որ բարկությունից ընչացքներն էր ոլորում, չկարողացավ զսպել իրեն, և ձեռքը աննկատելի տարավ դեպի արայի տակ ծածկված տասնոցը: Մանավանդ սաստիկ վիրավորվեց, երբ նրանք մեր ներկայության սկսեցին մեզ համար անհասկանալի լեզվով խոսել: Երևի դարձյալ հայհոյում էին Գևորգ Չաուշին և Անդ՛րանիկին: Իգդիրցին նկատեց Տիգրանի ձեռքի անզգույշ շարժումը և արագությամբ ատրճանակը պատյանից հանելով բարձրացրեց վեր:

Գործը կարող էր մեծ բարդությամբ վերջանալ, եթե այդ միջոցին Լոռեցի Սրապի առաջնորդությամբ ներս չմտնեին ցարական բանակի հինգ հայազգի գնդապետ՝ սրերը գա- լիֆտների և ճտքավոր փայլուն կոշիկների վրայով մինչև կրունկները երկարող, և ռուսահայ մի քանի երիտասարդ սպաներ՝ հպարտ գլուխները սպիտակ կանթավոր, սև գըլխարկներով ծածկած: Սպաներից մեկի անունը հիշում եմ Սամարցով, Դոնի Ռոստովից: Գնդապետներից երեք անուն ուժեղ տպավորվեց ականջիս մեջ՝ Թոմասբեկով, Սիլիկով, Բեկ Փիրումով:

Դրոն նրանց տեսնելով իջեցրեց ատրճանակը, Մշեցի Տիգրանն՝ իր տասնոցը, ես՝ իմ աթոռը, իսկ Քեռին՝ իր թամբը:

Իմանալով, որ մենք Մշո կողմերից ենք գալիս, ռուսահայ գնդապետներն ու երիտասարդ սպաները գրկախառնը՝ վեցին մեզ հետ և, բոլորս միասին ոտքի կանգնած, խմեցինք Հայաստանի ազատագրության կենացը:

Օ, ի՜նչ խանդավառ օր էր, ի՜նչ հրաշալի վայրկյան: Այդ ավագ և երիտասարդ զինվորականներին նայելով, ես նրկատում էի, որ ռուսաց Հայաստանում էլ կա մի հերոսական սերունդ, և բոլորի խորհուրդը նույնը՝ Հայաստանի ազատագրությունը:

Բերդից թնդանոթ արձակեցին: Դրոն և Լոռեցի Սրապը իրենց ծոցի խոշոր ժամացույցները հանելով՝ սլաքները ետ ու առաջ տարան: Թամբագործ Արշակն էլ ժամացույց ուներ. նա էլ իր ժամը ճշտեց: Իրենց ժամանակը ճշտեցին նաև ալեքսանդրոպոլցի երիտասարդ սպան և ցարական բանակի հինգ գնդապետները: Մեզ բացատրեցին, որ օրական երեք անգամ թնդանոթը համազարկ է տալիս, և բերդաքաղաքի բնակիչները նրա հարվածների տակ ուղղում են իրենց ժամացույցները: Վերջին թնդյունը լսվելու էր գիշերվա կեսին:

Այդ տեսակցությունից հետո Լոռեցի Սրապը ինձ և Մշեցի Տիգրանին թամբագործի արհեստանոցից հանելով, տարավ մի քարաշեն տուն, որ գտնվում էր բերդաձորի Սլլան կոչվող քարի մոտ:

Գիշերը այդտեղ լուսացրինք:

Առավոտյան Սրապն ասաց.

Մենք այս ձորով պետք է Ալեքսանդրոպոլ գնանք: Եվ նա նույն օրը միջնաբերդի պղնձագույն ժայռերի տակով մեզ դուրս բերեց Բերդաքաղաքից:

ՈՒԽՏ ԼԵՌԱՆ ՍՏՈՐՈՏՈՒՄ

Ալեքսանդրոպոլը շինված էր հարթության վրա, Արագած լեռան դիմաց: Յոթ եկեղեցի ուներ և մի նշանավոր շուկա: Տեղացիները այդ քաղաքին Գյումրի էին ասում: Հենց առաջին օրը այստեղ մի այնպիսի փորձանք եկավ մեր գլուխին, որ մեր բոբոիկ առնելն էլ մոռացանք, մեր ջուր խըմելն էլ, թամբագործ Արշակի աղմկալի արհեստանոցն էլ հետը:

Քաղաքի հյուսիս–արևմտյան մասում մի մեծ բերդ կար, տակը՝ «Չերքեզ» կոչվող մի ձոր: Լոռեցի Սրապը Պոդվալի Վաղո անունով մի գյումրեցու հետ գնաց այդ բերդի կողմերը փամփուշտ հայթայթելու, որ գիշերով ճանապարհ ընկնենք, իսկ ես և Մշեցի Տիգրանը սկսեցինք շրջել քաղաքում:

Ինչպես Բերդաքաղաքում, այստեղ նույնպես շատ հայազգի զինվորականներ կային, որոնց սրերի կոթերը երկարում էին մինչև կրունկները՝ զնգալով փայլուն խթանների վրա: Ոգևորվեց Մշեցի Տիգրանը և տասնոցը գոտու տակից հանելով՝ կապեց կողքին և սկսեց հպարտորեն ման գալ փողոցներով, երևակայելով, թե գտնվում է ազատագրված Հայաստանում: Մենք նախ եղանք քաղաքի զբոսայգում, ուր շատ գյումրեցիներ վար ու վեր էին անում ծառուղիներով: Բոլորի ուշադրությունը մեզ վրա էր, մանավանդ Տիգրանի սև աբայի տակից երկարող մաուզերի փայտյա կոթին:

Մի տեղ հաց կերանք (կարծեմ Ալեքսանդրովսկի փողոցն էր՝ «Յոթ Վերքի» մոտ) և դուրս գալով շարունակեցինք մեր պտույտը: Ս. Փրկիչի մոտով իջանք մինչև Դարբինների թաղը և ետ դարձանք:

Բերդաքաղաքից հետո մենք առաջին անգամ էինք տեսնում այդպիսի բարեշեն քաղաք: Իջավ իրիկուն, և ամեն տեղ լապտերներ վառվեցին՝ սյուների վրա, տների ճակատներին, խանութների ներսում: Մեր ապրած երկրում այդպիսի լույսեր չկային: Գեղեցիկ էին մանավանդ խանութների ցուցափեղկերի գույնզգույն լույսերը: Մի ցուցափեղկի առաջ կանգ առանք: Ներսի կողմից դրված էին շաքարի խոշոր գնդեր: Սուլթանի երկրում շաքար էլ չկար: Երբ մենք հետաքրքրությունից կռացած դիտում էինք շաքարի կապույտ գնդերը, գյումրեցիներից մեկը հետևից մոտենալով՝ ձեռքով կշռեց Տիգրանի մաուզերի կոթը՝ ասելով. «Աշես էսոր կրակողը հե՞տն է»: Տիգրանն արագ ետ դարձավ և մաուզերը կողքից քաշելով՝ թրը՛խկ... կրակեց օդում: Ապա հանգիստ փչեց փողի մեջ և զենքը տեղը դնելով, շարունակեց նայել դեպի խանութի ներսը:

Վա՛յ, վա՛յ, գոչեց հարբած գյումրեցին, վախից անզգայացած փռվելով մայթին:

Հը՛բը, իշու ձագ, տեսա՞ր, որ կրակողը հետն է, ասաց մի ուրիշ գյումրեցի, որ ետևից էր գալիս և նկատել էր, թե ինչպես իր հայրենակիցը ձեռքով ծանր ու թեթև

էր արել օտարականի մաուզերի կոթը:

Մեզ կարող էին տուգանել փողոցում կրակելու համար, եթե չլինեին Լոռեցի Սրապը և Պոդվալի Վաղոն, որոնք ժամանակին դեպքի վայրը հասնելով և մեզ կառք նստեցնելով՝ փախցրին դեպի «Կաղաչի պոստ» կոչվող զորանոցների կողմը:

Այդ շրջակայքում բանջարանոցներ կային: Մեկի մեջ կազմ ու պատրաստ մեզ էր սպասում ուստա Գրիգոր անունով մի երիտասարդ գյումրեցի՝ երեք բեռնված ավանակներով:

Չգիտեմ, թե կառապանը ինչ խոսեց ուստա Գրիգորի հետ, միայն էն լսեցի, որ ուստա Գրիգորը բարձրաձայն ասաց. «Ղու գործիդ աշե, օղուլ, ես սատանեքին նալել եմ, իր ձագերուն ման կուգամ»:

Իմ մշեցի լինելը շատ իրավունք չէր տալիս ինձ Տիգրանին մեղադրելու իր կրակոցի համար: Հայդուկը միշտ զգույշ է: Բայց օտար տերության քաղաքում անկարգություն էր արվել: Հարկավոր էր շտապել:

Մեր բեռ ու բարձով ելանք ճանապարհի վրա: Հանկարծ խուլ դղրդոցի հետ մեր կողքին ուժեղ թշշոց լսվեց, և մեր ավանակները կորան սպիտակ գոլորշու ամպերի մեջ:

Բուղ է: Մեր երկիր պառավողները բղով կշարժվեն, զգուշացրեց Պոդվալի Վաղոն, նայելով դեմից անցնող գնացքի ետևից:

Ծո, ինչ կըսես, օղուլ, էդպես որ էղներ, Ձիթողցենց բաղնիսները վաղուց Ամերիկա էին հասել, ասաց ուստա Գրիգորը գրաստներին փախցնելով գոլորշու տակից:

Պոդվալի Վաղոն և ուստա Գրիգորը իջան դեպի բանջարանոցները, իսկ մենք ավանակներին առած, Լոռեցի Սրապի հետ ուղղություն վերցրինք դեպի Կողբ: Կողբում շատ աղ կար: Մեր բեռները ծածկեցինք աղի բյուրեղներով և Իգդիրի միջով շարժվեցինք դեպի Օրգով:

Մասիսի լանջին երևաց ս. Հակոբի աղբյուրը: Հենց որ Տիգրանը իմացավ, որ մենք Մասիսի տակով ենք անցնում, նրա ծռությունը նորից բռնեց: Առաջարկեց Մասիսի գագաթը բարձրանալ: Այսպես էր դատում. մեկ էլ, ով գիտե, կյանքում առիթ կլինի՞, որ մենք Մասիսի լանջերով անցնենք՝ այդքան մոտ գտնվելով նրա գագաթին: Չէ որ Մասիսը Հայոց Բարձրավանդակի ամենաբարձր լեռն է, և նրա վրա կանգնողը կանգնած կլինի Հայաստանի բոլոր սարերի գլխին: Եվ Տիգրանը սկսեց համոզել Լոռեցի Սրապին, որ մի քանի ժամով ավանակներին հսկի, մինչև մենք կվերադառնանք:

Եղանակը աշնանային էր և խիստ նպաստավոր վերելքի համար: Ես էլ հմուտ լեռնագնաց էի և այդ առաջարկը իմ սրտին շատ մոտ էր, սակայն անմտություն էր այդ վիճակում մտածել Մասիս բարձրանալու մասին: Եվ արդյոք բարձրանալիս Մշեցի Տիգրանի կամ ինձ հետ մի նոր փորձանք չէ՞ր պատահի՝ բոլորովին անհաջողության մատնելով մեր վերադարձը: Հիշեցրի, որ մենք ուխտյալներ ենք, հատուկ առաքելությամբ դեպի Կարս եկած և կյանքով պատասխանատու մեզ վստահված գործի համար:

Ա՛յ Տիգրան, ասացի, եկ ձեռք քաշիր Մասիս բարձրանալու մտքից:

Մեր առաջնորդը ավելացրեց, որ Մասիսը այնպիսի սար չի, որ էշը կապես ստորոտը, ելնես գագաթն ու իսկույն իջնես: Այդ լեռան քամին սաստիկ զորավոր է: Նույնիսկ ամռանը նրա վրա ահեղ փոթորիկներ են լինում և կայծակներ են ճայթում օդի մեջ: Հիշատակեց մի քանի տեղացի և օտարազգի ուղևորների, որոնք հատուկ գավազաններով ու հարմարանքներով զինված, խանդավառությամբ մագլցել էին դեպի այդ լեռան գագաթը և անհետ կործանվել նրա սառույցների ու փոթորիկների սահմանին հասնելով:

Ես և Լոռեցի Սրապը հազիվ կարողացանք համոզել Տիգրանին այդ վտանգավոր վերելքից հրաժարվելու: Երդվեցինք, սակայն, որ երբ Հայաստանը ազատագրվի, և մենք ողջ լինենք, երեքով գտնվենք այն քաջամարտիկների շարքում, որոնք Հայաստանի ազատագրության դրոշը պիտի հաստատեն այդ լեռան գագաթին:

Նույնիսկ եթե մեզանից թեկուզ մեկը մնա կենդանի, նա պարտավոր է ի կատար ածել մեր երեքի ուխտը, առաջարկեց Տիգրանը:

Տվեք ձեր ձեռքերը, գոչեց Լոռեցի Սրապը՝ առաջինն իր ձեռքը պարզելով: Մեր բազուկները միացան, և մենք լռությամբ ծունկի իջանք մեծ լեռան առաջ:

Հասել էինք մի կետի, որտեղից պարզ երևում էին այն կեռմանները, որով մենք անցել էինք Ալյուր գյուղից դեպի Կարս գնալիս: Վտանգավոր էր նույն ճանապարհով վերադառնալ: Լոռեցի Սրապը մեզ խորհուրդ տվեց գնալ ԽոյԱալմաստ ճանապարհով: Նա մեզ հետ եկավ մինչև Փոքր Մասիսի ստորոտը, Մակու քաղաքի մոտ: Մակուն նստած էր մի անդնդախոր նեղ ձորի մեջ: Քաղաքի երկու կողմից հսկայական ժայռեր էին բարձրանում և կամարաձև կռանալով՝ ձգտում էին միանալ:

Տեսեք, մարդ են գլորում այգ ժայռից, մատնացույց արեց Լոռեցի Սրապը, Եվ իսկապես, հեռվից տեսանք, թե ինչպես մի կալանավորված մարդու վար գլորեցին կամարաձև ժայռից:

Երևի ֆիդայի կլինի, կամ ներքին հանցագործ: Այս երկրում այդպես են պատժում օրինազանցներին: Սարդարի հրամանով հանցապարտին հանում են ժայռի գագաթը, ձեռքերը ոտքերը կապում են և գլորում անդունդ: Այն գեղեցիկ քյոշկն էլ, որ երևում է դիմացի լեռնաշղթայի գագաթին, Սարդարի ամառանոցն է, մատնացույց արեց մեր առաջնորդը:

Սարդարը մեզ էլ գլորել կտար այդ ժայռերից, եթե իր երկրում ծնված լինեինք, նկատեց Մշեցի Տիգրանը:

Անպայման կգլորեին և առաջին հերթին քեզ: Որտեղ էլ բռնվես, քո տեղը անդունդն է, ասացի ես: Մանավանդ, որ դու երեկ հրացան պարպեցիր Գյումրի քաղաքում, իսկ այսօր էլ Մասիս բարձրանալով ուզում էիր վտանգել մեր ամբողջ գործը:

Երեքով ետ նայեցինք:

Մասիսը մեջքով կանգնած էր մեր հայացքի առաջ: Օ՛, այդ լեռը: Քանի Մասիսը կա, հայի երազանքին վախճան չկա:

Այստեղ Լոռեցի Սրապը վերջին անգամ հաց կերավ մեզ հետ, ստուգեց մեր բեռները և պատրաստվեց վերադառնալ Բերդաքաղաք:

Բաժանվելիս ասաց.

Դուք սուլթանի թախտը ծակեք, ինչքան փամփուշտ հարկավոր լինի՝ կտանք: Եթե հարկ եղավ՝ մենք էլ կգանք:

Լսվեց մի հեռավոր խուլ որոտ: Կարսեցիները իրենց ժամացույցներն էին ուղղում վերնաբերդից թնդանոթի արձակած զարկով:

Մենք բռնեցինք Թադեի վանքի ճանապարհը: